

## ԿԱՐԳ

### «ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՏԵՍԱՃԱՅՆԱԳՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետև՝ **ՀՀ փաստաբանական դպրոց**) վարչական տարածքում տեսանկարահանում և տեսաձայնագրում իրականացնելու սույն կարգը (այսուհետև՝ **Կարգ**) սահմանում է ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական տարածքում տեսանկարահանումներ և տեսաձայնագրություններ իրականացնելու կարգը, ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմի, դասախոսների, տեխնիկական աշխատողների, փաստաբանների, ունկնդիրների և ՀՀ փաստաբանական դպրոցի տարածք մուտք գործած այլ անձանց իրավունքները, սահմանափակումները, պարտականությունները, արգելքները, գաղտնիությանը և պատասխանատվությանը վերաբերող ընթացակարգերը:
2. ՀՀ փաստաբանական դպրոցի տարածքում կատարված տեսանկարահանումը և (կամ) տեսաձայնագրությունը, անկախ իրենց բովանդակությունից, համարվում են ՀՀ փաստաբանական դպրոցի սեփականությունը՝ բացառությամբ հեղինակային իրավունքի օբյեկտների:
3. Կարգը պարտադիր է ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմի, դասախոսների, տեխնիկական աշխատողների, փաստաբանների, ունկնդիրների և ՀՀ փաստաբանական դպրոցի տարածք մուտք գործած այլ անձանց համար:
4. ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական տարածքում տեսանկարահանում և (կամ) տեսաձայնագրություն կատարվում է ելնելով անվտանգության պահանջներից՝ բացառությամբ կարգապահական վարույթի ժամանակ որպես ապացույց օգտագործելու կամ ՀՀ փաստաբանական դպրոցում կազմակերպվող քննությունների ժամանակ քննության ընթացքը հետևելու կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերից:
5. Կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ

փաստաբանական դպրոցի տնօրենը:

6. Կարգում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ իմաստը (նշանակությունը).
- 1) **ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական տարածք՝** ՀՀ փաստաբանական դպրոցին սեփականության, վարձակալության կամ այլ իրավունքով հանձնված տարածքը,
- 2) **մասնավոր տարածք՝** հանգստի սենյակ, զուգարան, լողասենյակ, կողպվող մասնավոր պահարաններ, հանդերձարաններ,
- 3) **ադմինիստրատոր (վարչավար)՝** տեղեկատվական տեխնոլոգիայի անվտանգության աշխատակից,

## II. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԸ

7. ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական տարածքում նկարահանման գործընթացը վերահսկվում է միայն ՀՀ փաստաբանական դպրոցի անվտանգության աշխատողների և ադմինիստրատորի (վարչավարը) կողմից:
8. Կարգի 7-րդ կետով սահմանված նյութը ՀՀ փաստաբանական դպրոցի անվտանգության աշխատակիցը կամ ադմինիստրատորը (վարչավարը) պարտավոր է տրամադրել միայն ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին՝ վերջինիս գրավոր պահանջի դեպքում, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:
9. ՀՀ փաստաբանական դպրոցը, ելնելով անվտանգության և այլ նկատառումներից, գրանցում և պահպանում է տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման բոլոր նյութերը, այդ թվում՝
  - 1) բոլոր լսարաններում դասախոսության և ընդմիջման ժամերին, ինչպես նաև միջանցքներում,
  - 2) ՀՀ փաստաբանական դպրոցի տարածք մուտք գործելու վայրերը:
10. ՀՀ փաստաբանական դպրոցը երաշխավորում է տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման բոլոր նյութերի պահպանման անվտանգությունը:

### III. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԳԵԼՔՆԵՐ

11. Տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման տեխնիկական միջոցները պետք է համապատասխանեն բարձր չափանիշներին և պաշտպանվածության բարձր որակին:
12. Անվտանգության աշխատակիցը կամ ադիմինիստրատորը (վարչավարը) պարտավոր են խստագույնս պահպանել Կարգի պահանջները:
13. ՀՀ փաստաբանական դպրոցը պարտավոր է անվտանգության աշխատակցին և ադիմինիստրատորին ծանոթացնել Կարգին, ինչպես նաև անցկացնել վերապատրաստում:
14. ՀՀ փաստաբանական դպրոցը տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման նյութերը պարտավոր է պահել, ոչ պակաս քան երկու շաբաթ, բայց ոչ ավել, քան մեկ ամիս ժամկետով:
15. Տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման նյութերը կարող են պահպանվել նաև կոշտ սկավառակի վրա:
16. Բոլոր այն վայրերում, որտեղ տեղադրված են տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման սարքեր, ՀՀ փաստաբանական դպրոցը պարտավոր է տեղադրել համապատասխան նախազգուշացնող նշան՝ «Տարածքը հսկվում է տեսախցիկով:» գրառմամբ:
17. Տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման տեխնիկական միջոցների ցանկացած խափանման դեպքում անվտանգության աշխատակիցը պարտավոր է անմիջապես իրազեկել ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին և (կամ) ադիմինիստրատորին (վարչավարին):
18. Կարգով նախատեսված նպատակներից բացի՝ այլ նպատակով տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրության նյութերի օգտագործումն արգելվում է:
19. Արգելվում է տեսանկարահանում և (կամ) տեսաձայնագրություն կատարել մասնավոր համարվող տարածքներում:
20. Անորակ կամ անհայտ արտադրության տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման տեխնիկական միջոցների օգտագործումն արգելվում է:
21. Արգելվում է տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման տեխնիկական միջոցները կենտրոնացնել անհատների վրա՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից,

լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

#### IV. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

22. ՀՀ փաստաբանական դպրոցը պետք է հարգի անձանց մասնավոր կյանքի իրավունքը և ապահովի տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման գաղտնիությունը:
23. Ոչ ոք, բացի Կարգում նշված անձանցից, իրավունք չունի ծանոթանալ տեսանկարահանման և (կամ) տեսաձայնագրման նյութերին, եթե նման անհրաժշտությունը պայմանավորված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ Կարգով:

#### V. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹՆԵՐ

24. Կարգն ուժի մեջ է մտնում ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրվանից և գործում է անժամկետ:
25. Կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել միայն ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կողմից:
26. Կարգի հետ կապված մեկնաբանությունները (պարզաբանումները) տրվում են ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի (բողոքի) հիման վրա: